այդտեղ դուրս կը գայ 35–40 հազար: Այնուհետեւ, Նախիջեւանի երկրամասի ընդհանուր՝ 20,000 բնակչութեան ⅔–ը եղել է թաթար: Եթէ մնացած ⅓–ն էլ հայ տարր համարենք, ուրեմն վերջինիս թիւը եղած կը լինի՝ 6,700:

Ղարաբաղի համար Բոդենշտէդտ տալիս է 60,000 թիւը, որի, ասում է որոշակի, ⅓–ը, — ուրեմն20,000 — հայեր են եղած:

Ախալցխայի փաշայութեան բնակչութեան թիւը Բ. 50,000 է համարում մօտաւորապէս, որի «մեծամասնութիւնը» հայ, ասել է ուրեմն՝ մօտ 30,000:

Փամբակ–Շորագեալի, Ղազախ–Շամշատնի եւ Գանձակի գաւառի մասին թուական տուեալներ չունի Բոդենշտէդտ, միայն Շուշի (6000) եւ Գանձակ (8000, որի ⅓–ը՝ հայ) քաղաքների բնակչութեան թուի մասին կան տեղեկութիւններ:

Վերջիններս պակսում են նաեւ Թիֆլիսի ու առհասարակ Վրաստանի, ինչպէս նաեւ Արեւելեան Անդրկովկասի զանազան գաւառներում ցրուած հայութեան ամբողջական թուի մասին:

Երեւանի, Նախիջեւանի, Ղարաբաղի եւ Ախալցխայի փաշայութեան հայերին վերաբերեալ բացորոշ կլոր թիւերը եթէ դումարելու լինինք իրար հետ (40,000+7,000+20,000 +30,000), կը ստանանք 97,000: Թէեւ Բոդենշտէդտ ամէն անգամ որոշակի չէ ասում, բայց պարզ է, որ նրա յառաջ բերած թիւերը վերաբերում են բնակչութեան արական սեռին, ինչպէս որ սովորութիւն է եղել այն ժամանակ վիճակագրել: Եւ յետոյ, ինչպէս ընթերցողը տեսաւ, Բոդենշտէդտ վերը՝ Կովկասին վերաբերող ընդհանուր թիւը (1½ միլ.) յիշելիս շատ որոշ ասում է ինքը, թէ դա վերաբերում է միայն արական սեռին:

Տեսանք արդէն, որ Բոդենշտէդտ, Անդրկովկասի հայ արական սեռի բնակչութեան թիւը հաշուում է 135,000: Եթէ այս թուից հանելու լինինք մեր ստացած վերոյիշեալ թիւը՝ 97,000, կը մնայ 38,000: Նշանակում է՝ այսչափ հայ բնակչութիւն էլ ընկնում է Փամբակ–Շորագեալ, Ղազախ–Շամշատին եւ Գանձակ վարչական միաւորների եւ առհասարակ մնացեալ Կովկասի վրայ: Որով, ըստ Բոդենշտէդտի, «Հայկական Շրջանի»ի ընդհանուր բնակչութեան թիւը եղել է մօտաւորապէս՝ 180–200,000 (միա՛յն արական՝ 90–100,000), եթէ արական բնակիչների թուին հաւասար ընդունենք իգականների թիւը: (Հաֆստհաուզէն տալիս է 164,500 թիւը):

Հայեր եղել են Հայկ. Շրջանում, նայելով Բ.ի տուեալներին, ընդամէնը ուրեմն 80–92,000, (ըստ Հաքստհաուզէնի՝ 110,000):

Ամբողջ Կովկասի — աւելի ճիշդը՝ Անդրկովկասի — հայերի ընդհանուր թիւը Բոդենշտէդտ ընդունում է ուրեմն 270,000 (135,000 արական, 135,000 իգական սեռի): Այս թիւն էլ մօտ է Հաքստհաուզէնի տուեալներից բխող հաշուին (ըստ Բէօպէլէնի 294,000):

Նկատի ունենալով որ Բոդենշտէդտ ինքն էլ ընդունում է, որ Կովկասին յատկացրած (ուրեմն եւ Անդրկովկասին) թիւը սեղմ է հաշուած, որով նոյնը պիտի ընդունել նաեւ առանձին–առանձին ցեղերի թուի մասին, ապա ուրեմն ճշմարտութեան մօտ կը լինինք եթէ ասենք, որ Բոդենշտէդտի տուեալներով հայութեան ընդհանուր թիւը 1840–ական թուականների սկզբին հաշուելու է մօտ երեք հարիւր հազար, որից մօտ 100,000–ը՝ «Հայկական Շրջանում» կամ «Ռուսահայաստան» դիտուած երկրամասում: Վերջին եւ մանաւանդ առաջին թիւն էլ իրենց կողմից գրեթէ նոյնանում են Հաքստհաուզէնի տուեալներին (տես «Հայրենիք» ամսագիր, 1926, դեկտ. գիրքը): Իսկ առհասարակ Ռուսաստանում ապրող բոլոր հայերի թիւը, տեսանք, Բոդենշտէդտ հաշուում է 400,000:

Հետաքրքրական պիտի լինէր բաղդատել Բոդենշտէդտի եւ Հաքստհաուզէնի թուական տուեալները վրացական եւ թուրք–թաթարական ցեղերի մասին եւս, որ սակայն մեզ շատ հեռու պիտի տանէր: Այսչափը ասենք, որ այդ մասին յիշեալ երկու աղբիւրները զգալիօրէն տարբերւում են իրարից, մանաւանդ վրացիների վերաբերմամբ, ուստի եւ կարօտ են քննական լուսաբանութեան:

* * *

Այժմ տեսնենք, թէ Բոդենշտէդտ ի՞նչ տեղեկութիւններ է տալիս հայ երկրի եւ ժողովրդի մասին:

Բոդենշտէդտ Հայաստան է գնացել, Թիֆլիսից, 1844 թուականի մարտի վերջերին,